Ծուշանիկ Կուրղինյան

Ոչ ոք . . .

Արծիվ եմ ազատ, մրրիկ թևերով,
Հոգիս ձգտում է անհունին անծայր,
Ըմբոստ տենչերիս հասնելու համար՝
Հոգ չէ թե ճնշե կյանքն ինձ անգորով:

Թռիչքն է անհաղթ մտքիս կենդանի,
Հավատս հզոր, վառ սերս՝ անմահ,
Որ էլ<ի> կին եմ՝ ամբողջ պոեմա՝
Հոգ չէ թե մահը ինձ շուտով տանի . . .

Չկա մի կապանք, որ ընկճե հոգիս,
Մարե երկնային հուրը սրտիս մեջ,
Իղձերս թափի հրդեհն է անշեջ՝
Ոչ ոք չի կարող բռնանալ երգիս:

Արծիվ եմ ազա՛տ, բա՛րձր թռիչքով,
Ամենքի համար տեղ կա իմ սրտում,
Ով որ սողում է սրտանց եմ ատում,
Ըմբոստի համար պատրաստ եմ կյանքով . . .

1907 թ. 4 մարտի